ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 16 >> նոյեմբերի 2015 թվականի N: 237-Ա գ.Գյումրի

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ 2000 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏՐԴԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՓՈՂՈՑԻ 7/6 ՇԵՆՔԻ ԹԻՎ 21 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գյումրի քաղաքի Տրդատ Ճարտարապետ փողոցի 7/6 շենքի՝ որպես պետական սեփականություն անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման 2004 թվականի հունիսի 30-ի թիվ 455380 վկայականը, Գյումրի քաղաքում Ամերիկյան Կարմիր Խաչի միջոցներով կառուցված բնակելի շենքերի բնակարանները վիճակահանությամբ բաշխման գործընթացի վերաբերյալ մարզային հանձնաժողովի 2000 թվականի սեպտեմբերի 6-ի արձանագրությունը և Գյումրու քաղաքապետարանի կողմից 2000 թվականի դեկտեմբերի 25-ին տրված «Բնակվելու թույլտվությունը», ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդի բնակարանների բաշխման և 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» թիվ 1935-Ն որոշման 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով՝

Աղետի գոտու վերականգնման ծրագրի իրականացման շրջանակներում Ամերիկյան Կարմիր Խաչի միջոցներով կառուցված Գյումրի քաղաքի Տրդատ Ճարտարապետ փողոցի 7/6 շենքի թիվ 21, երեք սենյականոց բնակարանն անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիր կնքել ներքոհիշյալ քաղաքացիների հետ.

Անտիկյան Կիմա Մկրտչի,
Անտիկյան Սամվել Կարլենի
Մարտիրոսյան Գայանե Կարլենի,
Անտիկյան Հակոբ Կարլենի,
Մնացականյան Կարինե Կարլենի,
Անտիկյան Թամարա Վարդանի,
Անտիկյան Կիմա Սամվելի,
Անտիկյան Մարիամ Սամվելի,
Մնացականյան Լուսինե Ռաֆիկի,
Մնացականյան Հրանուշ Ռաֆիկի,
Մակարյան Թագուհի Աշոտի,
Մարտիրոսյան Նորիկ Աշոտի:

Ֆ.ՅՈԼԱՎՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է